**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 3**
**№ ՀԲՄԾՁԲ-7/1-4 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ք. Երևան 14 .04.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության ՆՏԱ դեպարտամենտի պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև՝ Պատվիրատու, մի կողմից, և «Սաքի» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Հ. Կարապետյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, հիմք ընդունելով 15.05.2018թ. կնքված № ՀԲՄԾՁԲ-7/1-4 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.13 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին

**1. Համաձայնագրի առարկան**

1.1 Սույն Համաձայնագրով Կատարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում մատուցել Պայմանագրի №1 Հավելվածով նախատեսված ծառայությունները (այսուհետև՝ Ծառայություն), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար:

**2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Սույն Համաձայնագրով Կատարողի կողմից մատուցվող Ծառայության գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 13081485,6 (տասներեք միլիոն ութսունմեկ հազար չորս հարյուր ութսունհինգ ամբողջ վեց) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ: Գինը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով, Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուի մատուցած Ծառայությունների դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետին համապատասխան, բայց ոչ ուշ քան 25.12.2020թ.:

**3. Այլ պայմաններ**

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը: Համաձայնագիրն ուժի մեջ է կնքման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը: Համաձայնագրի պայմանները կիրառվում են պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ծառայությունի մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 3 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ թիկունքի վարչությունը:

**4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՏԱՐՈՂ** |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Սաքի» ՍՊԸ |
| ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5 | ՀՀ ք. Գորիս, Անկախության 2/31 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Արարատբանկ» ԲԲԸ, Գորիսի մ/ճ |
| Հ/Հ 900011144079 | Հ/Հ1510019341900100 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 09213482 |
| ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ | տնօրեն |
| Ն. ՅՈԼՉՅԱՆ | Հ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ |

*Հավելված N 1*

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Հ/հ | Միջոցառման և գնման ենթակա ծառայությունների անվանումները | Տեղակայման վայրը |  | Չ/մ | Քանակ | Միավորի գինը (ՀՀ դրամ) | Ընդհանուր գումարը (ՀՀ դրամ) | Գնման ժամանակացույց 2020թ ըստ ամիսների |  |  |  |  |  |  |  |  |  |  |  |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
|  |  | Զորամաս | Վայր |  |  |  |  | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր |
| 1 | լվացքի հավաքման ծառայություններ | Եղեգնաձորի կայազոր, այդ թվում |  | դրամ | 1 |  |  | 3337 | 3337 | 3337 | 2773 | 2773 | 2773 | 2444 | 2444 | 2444 | 2632 | 3337 | 3337 |
|  |  | 70179 | Վայք | կգ. | 34968 | 184,9 | 6465583.2 | 3337 | 3337 | 3337 | 2773 | 2773 | 2773 | 2444 | 2444 | 2444 | 2632 | 3337 | 3337 |
| 2 | լվացքի հավաքման ծառայություններ | Գորիսի կայազոր, այդ թվում |  | դրամ |  |  |  |  |  |  |  |  |  |  |  |  |  |  |  |
|  |  | 60369 | Գորիս | կգ. | 13318 | 189,6 | 2525092.8 | 1278 | 1278 | 1278 | 1062 | 1062 | 1062 | 936 | 936 | 936 | 934 | 1278 | 1278 |
|  |  | 73128 | Կապան | կգ. | 20832 | 189,6 | 3949747.2 | 1988 | 1988 | 1988 | 1652 | 1652 | 1652 | 1456 | 1456 | 1456 | 1568 | 1988 | 1988 |
|  |  | 10724/32383 | Կապան | կգ. | 744 | 189,6 | 141062.4 | 71 | 71 | 71 | 59 | 59 | 59 | 52 | 52 | 52 | 56 | 71 | 71 |
|  | Ընդհանուր |  |  |  | 34894 |  | 6615902.4 | 3337 | 3337 | 3337 | 2773 | 2773 | 2773 | 2444 | 2444 | 2444 | 2558 | 3337 | 3337 |

Համաձայնագրի պայմանները կիրառվում են պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ն. ՅՈՒԼՋՅԱՆ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Սաքի» ՍՊԸ տնօրեն

Հ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

«ՍԱՔԻ» «САКИ» «SAQI» 09213482

*Հավելված N 2*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Հ/հ | Գնման առարկան | CPV | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | Դեկտեմբեր, ոչ ուշ քան 25.12.2020 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | լվացքի հավաքման ծառայություններ/ Եղեգնաձորի կայազոր/ | 98311100/2 | 2363761.6 | 2876489.3 | 3389217 | 3841112.6 | 4293008.2 | 4744903.8 | 5231560.6 | 5848572 | 6465583.2 |
| 2 | լվացքի հավաքման ծառայություններ/ Գորիսի կայազոր/ | 98311100/2 | 2423846.4 | 2949607.2 | 3475368 | 3938750.4 | 4402132.8 | 4865515.2 | 5350512 | 5983207 | 6615902.4 |

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ն. ՅՈՒԼՋՅԱՆ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Սաքի» ՍՊԸ տնօրեն

Հ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

«ՍԱՔԻ» «САКИ» «SAQI» 09213482